ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N101-Ա
19 հուլիս 2021Թ
ՆԱԻՐԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի, Վարդահովիտի,Գողթանիկի հիմնական դպրոցների կառավարման միացյալ խորհրդի նախագահի 2021 թվականի հուլիսի 14-ի գրությունը և Նաիրա Մնացականյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի հուլիսի 19-ից Նաիրա Մնացականյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2021 թվականի հուլիսի 19-ից ՀՀ Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Մնացականյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծել նրա հետ կնքած 2016 թվականի մայիսի 13-ի N298 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

7/19/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ